Հաստատված է
Հավելված 23
ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղարի
2023թ. հունիսի 6-ի N 163-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի աշխատակազմի /այսուհետ՝ Մարզպետի աշխատակազմ/ առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության /այսուհետ՝ Վարչություն/ ավագ մասնագետ (ծածկագիր՝ 92-30.2-Մ3-2)

1.2. Ենթակա և հաշվետու է

Ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը կամ ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Վ. Պետրոսյան 4

2. Պաշտոնի բնութագիրը

1) մասնակցում է ընտանիքների, կանանց և երեխաների պաշտպանությանն ուղղված ծրագրերի մշակման աշխատանքներին, ուսումնասիրում մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերը, մշակում դրանց լուծմանն ուղղված ծրագրեր,
2) մասնակցում է կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քաղաքականության համակարգման լիազոր մարմնին տարեկան հաշվետվության ներկայացման աշխատանքներին կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի լուծմանն ուղղված գործընթացի մասին և տալիս առաջարկություններ՝ հաջորդ տարվա իրականացվելիք միջոցառումների մասին,
3) մասնակցում է մարզում կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) հիմնահարցերի հետ կապված աշխատանքներին, մշակում զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրեր, ոստիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ աշխատանքներ է իրականացնում իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) հետ,

4) իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգի վարման աշխատանքները,
5) իրականացնում է գործընթաց երեխայի կյանքը կամ առողջությունը վտանգող անմիջական սպառնալիքի դեպքերում, խնամակալության և հոգաբարձության մարմնին ցուցաբերում է անհրաժեշտ աջակցություն՝ երեխային ծնողներից (նրանցից մեկից) կամ այն անձանցից, որոնց խնամքին է հանձնված երեխան, վերցնելու և անհապաղ ժամանակավոր տեղավորումն ապահովելու հետ կապված աշխատանքներում,
6) մասնակցում է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությանն ուղղված աշխատանքներին, բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի գնահատման արդյունքների եզրակացության հիման վրա վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը՝ նրանց ներգրավելով հանրակրթական կամ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում, աջակցում է երեխաների ծննդյան վկայականների ձեռքբերմանը՝ դրանց բացակայության դեպքերում,
7) իրականացնում է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն, նրանց մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ կազմում եզրակացություն՝ երեխայի հետագա խնամքը տրամադրելու մասին,
8) իրականացնում է աշխատանքներ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատություններում երեխայի խնամքի տրամադրման ողջ ժամանակահատվածում, երեխային ընտանիքում տեղավորելու հնարավորության մասին համապատասխան տեղեկատվություն ստանալուց հետո, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում այդ մասին տեղեկացնում է բնակչության սոցիալական պաշտպանության հաստատության գտնվելու վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնին,
9) մասնակցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում որդեգրել ցանկացող կամ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձին դրական կամ բացասական եզրակացության տրամադրման աշխատանքներում,
10) մասնակցում է երեխայի ծնողների (ծնողի) կամ ընտանիքի չափահաս այլ անդամի գրավոր դիմումի դեպքում բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող (խնամվող) երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու աշխատանքներին:

Իրավունքները՝

- ուսումնասիրել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերը, ներկայացնել ծրագրեր,
- տարեկան հաշվետվության ներկայացման համար համագործակցել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների քաղաքականության համակարգման լիազոր մարմնի հետ,
- Մարզում կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրերի շրջանակներում կազմակերպել հանդիպումներ իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող ծնողների հետ, այցելել տներ, հրավիրել մասնագետներ և տալ կարծիք,
- դիմել բժշկահոգեբանամանկավարժական կենտրոն հանրակրթությունից դուրս

մնացած երեխաների վերաբերյալ գնահատման արդյունքների եզրակացություն ստանալու նպատակով,

- որդեգրել ցանկացող կամ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձից պահանջել փաստաթղթեր, կատարել տնայց, ուսումնասիրություններ, հավաքագրել փաստեր և կարծիքներ,
- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգի վարման նպատակով հավաքել տեղեկատվություն, խնամակալության և հոգաբարձության մարմնին ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն, համագործակցել համայնքների և ուսումնական հաստատությունների ներկայացուցիչների հետ,
- կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ծնողներից կամ այլ օրինական ներկայացուցիչներից պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր, կազմակերպել տնայց,
- երեխայի կյանքին և առողջությանը վտանգ սպառնալու դեպքերում վերցնել երեխային ծնողներից և ապահովել երեխայի տեղավորումը խնամակալ կամ խնամատար ընտանիքում, իսկ դրա անհնարինության դեպքում համապատասխան հաստատությունում,
- համագործակցել կրթական և բժշկական հաստատությունների, ՏԻՄ-երի, ուժային կառույցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, մասնակցել համայնքների ԽՀՀ-ների նիստերին:

Պարտականությունները

- մարզում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների հիմնահարցերի հետ կապված կատարել տնայցելություններ, կարիքի գնահատում, մշակել դրանց լուծմանն ուղղված ծրագրեր,
- տարեկան հաշվետվության կազմման նպատակով հավաքագրել և ուսումնասիրել համապատասխան տեղեկատվությունը,
- մշակել Մարզում կանանց և երեխաների առուվաճառքի (թրաֆիքինգ) զոհերի սոցիալական վերականգնմանն ուղղված ծրագրեր, համագործակցել ոստիկանության համապատասխան ծառայությունների, խնամակալության և հոգաբարձության մարմնի հետ, կազել եզրակացություն, կատարել հաշվառում «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգում,
- հանրակրթությունից դուրս մնացած երեխաների դեպքում վկայագրել երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, նրանց ներգրավել հանրակրթական կամ հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում, երեխայի ծննդյան վկայականի բացակայության դեպքերում օգնել ձեռքբերմանը,
- սահմանված կարգով և ժամկետում որդեգրել ցանկացող կամ խնամատար ծնողի վերաբերյալ լրացնել կենսապայմանների ուսումնասիրության ակտ, կատարել անհրաժեշտ ուսումնասիրություններ, աջակցել դրական կամ բացասական եզրակացության տրամադրման գործընթացին,
- երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու նպատակով կատարել ուսումնասիրություն, աջակցել համապատասխան եզրակացության տրամադրմանը (դրական կամ բացասական)՝ դրա մեկական օրինակներն ուղարկելով նաև

հոգաբարձության մարմնին,

- աջակցել խնամակալության և հոգաբարձության մարմնի կողմից ներկայացված փաստաթղթերի վերաբերյալ եզրակացության տրամադրմանը, կենսապայմանների և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրություն իրականացնելուց հետո տալ կարծիք առանց ծնողական խնամքի մնացած երեխայի հետագա խնամքը տրամադրելու մասին,
- Վարչության գործառույթներից բխող աշխատանքների պատշաճ իրականացման համար կազմել հաշվետվություն, ստուգել ստացված փաստաթղթերը, պատրաստել իրավական ակտերի, գրությունների նախագծեր, տալ եզրակացություն,
- ուսումնասիրել Վարչության գործառույթներից բխող իրավական ակտերը և ներկայացնել առաջարկություն Վարչության պետին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը.

1	Ուղղություն	Կրթություն
2	Ոլորտ	Կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ սոցիալական բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ

- Փաստաթղթերի նախապատրաստում
- Փոփոխությունների կառավարում

- Ժամանակի կառավարում
- Բողոքների բավարարում

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված՝ մասնագիտական գործունեության վերջնարդյունքին նպաստող միջանկյալ արդյունքի ստեղծման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական և տարածքային ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և ներկայացնում խնդիրների լուծման տարբերակներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: